Ազատագրված միտք

Կենտրոնացում Սատանան մեզ վրա հիմնականում հարձակվում է մեր մտքի միջոցով: Աստված մեզ տվել է Իր Խոսքը, որպեսզի կարողանանք ճշմարտությամբ դեմ կանգնել հակառակորդին և բոլոր կապանքներից ազատ լինել:

Ուսումնասիրություն Բանալի համար. Բ Կորնթացիներին 10.3-5:

Ծննդոց 3-րդ գլուխը մեզ պատմում է, թե ինչպես սատանան մարդկությանը ստով գերի վերցրեց: Հիսուսը եկավ պարտության մատնելու սատանային և ազատ արձակելու մեզ Իր ճշմարտությամբ (Հովհ. 8.32): Ահա երեք ճշմարտություն, որ մենք պետք է հասկանանք.

- *Միտքը չարի ու բարու հիմնական մարտադաշտն է* (Հակ. 4.7):
  Մենք մեր մտքի պահապաններն ենք: Սատանան մեզ այնպիսի մտքեր է բերում, որոնք հակառակ են Աստծո Խոսքին և փորձում է մեզ գերի վերցնել այդ մտքերով: Մենք պետք է որոշում կայացնենք՝ մտածել դրանց շուրջ կամ էլ գերի վերցնել դրանք: Մեր մտքերում ազատություն գալիս է՝ Հիսուսին մեր մտքերի Տերը դարձնելով:
- *Աստծո Խոսքը հոգևոր զենք է* (Եփ. 6.10-17, Եբր. 4.12-13):
  Աստծո տված զենքերից յուրաքանչյուրը՝ ճշմարտություն, արդարություն, փրկություն, Ավետարանի խաղաղություն, հավատ, Հոգու սուր, Նրա ճշմարտության կիրառումն է մեր կյանքում: Մենք սատանայի դեմ պայքարում ենք Աստծո ճշմարտությունով, իսկ ճշմարտության աղբյուրն Աստվածաշունչն է:
- *Աստծո Խոսքի վրա մտածելը հոգևոր պատերազմ է* (Սաղմ. 1.1-3, Բ Օր. 6.6-9):
  Աստծո Խոսքի վրա մտածելը՝ կոնկրետ համարները շարունակաբար կարդալն ու դրանց վրա մտածելու սովորություն է: Մենք վերածրագրավորում ենք մեր ուղեղը՝ այլ կերպ մտածելու՝ կապանքներ առաջացնող մտքերը փոխարինելով Աստծո Խոսքի ճշմարտությամբ: Սուրբ Գիրքը մեզ սովորեցնում է օրը չորս անգամ մտածել Խոսքի վրա՝ երեկոյան, առավոտյան, երբ տանն ենք և երբ ճանապարհին ենք:

Քննարկում

1. Ի՞նչը քեզ թվաց ամենաօգտակարն այս ուղերձի մեջ:

2. Կարդա Բ Կորնթացիներին 10.3-5-ը: Ինչպե՞ս դու կբացատրեիր «մտքերը գերի վերցնել» հասկացությունը: Ինչո՞ւ է սա հնարավոր դառնում միայն Աստծո Խոսքի և Սուրբ Հոգու օգնությամբ:

3. Կարդա Եբրայեցիներին 4.12-13-ը: Աստծո Խոսքը կենդանի է և գործող: Ի՞նչ մոտեցում ես դու ունեցել Աստվածաշնչի հանդեպ: Այս մտքերից ո՞ր մեկն է լավագույնս նկարագրում քո նախկին պատկերացումն Աստվածաշնչի վերաբերյալ.

(ա) Աստվածաշունչն առասպելների պատմական ժողովածու է:

(բ) Աստվածաշունչը կանոնների ու ցուցումների գիրք է:

(գ) Աստվածաշունչը ճշմարիտ է, սակայն դժվար հասկանալի:

(դ) Այլ:

4. Խնդիրը ոչ թե վախն է, դեպրեսիան, կիրքը, բարկությունը, քո կախյալությունը, քո անցյալը կամ _____, այլ քո մտածելակերպը դրա մասին: Կարո՞ղ ես քո կյանքից օրինակ բերել, թե ինչպես է Աստված ազատել քեզ, երբ դու սովորել ես այլ կերպ մտածել:

5. Մի քանի րոպե հատկացրու՝ նայելու Աստվածաշնչի մեջ և որոշելու, թե որ համարի վրա դու կցանկանայիր մտածել այս շաբաթ: Եթե քեզ համար հարմար է, կարդա այն բարձրաձայն խմբի առաջ:

Տուն տար

Ամփոփելիս հիշիր.

- Սատանայի հետ մեր մարտադաշտը մեր միտքն է:
- Աստծո Խոսքը մեր զենքն է՝ հաղթելու սատանային:
- Աստվածաշնչի վրա մտածելը մի գործընթաց է, որով հաղթում ենք ճակատամարտը:

Աղոթիր

Աղոթիր, որ յուրաքանչյուր անձնավորություն այս շաբաթ հաղթություն ունենա իր մտքերի դեմ ճակատամարտում: